ղի վրայ նստած է նա: Ձին այդ բոլոր ծանրութիւնների տակին հազիւ է երեւում: Աւելի ունեւոր ճանապարհորդները նստած էին թեթեւ, թամքած ձիաների վրայ: Նրանց ծանրութիւնները տանում էին առանձին ձիաներ, որոնց վրայ նստած էին ծառաները: Այդ հարուստները ման էին ածում իրանց հետ եւ վրաններ: Քարաւանի մէջ կային եւ կանայք, որոնք, փաթաթած իրանց չադրաների մէջ, աչք ու երես կապած, մի շորեղէն գունդի նման, գրուած են գրաստների վրայ: Հարուստների կանայք նստած էին ծածկուած պատգարակների մէջ. իւրաքանչիւր պատգարակը տանում էին երկու ջորիներ:

Մահմեդական ունեւորը իր բաւականութիւնների ոչ մէկից ետ չէ մնում եւ ճանապարհորդութեան ժամանակ: Նա սովորել է ամէն րոպէ նարգիլէ ծխել, ամէն րոպէ մի ֆինջան դառը ղահոէ խմել, որը մի մեծ մատնոցի չափ հազիւ կը լինի: Այդ երկուսի պատրաստութիւնը բաւական հոգսերի է կարօտ, կրակ է հարկաւոր, ջուր է հարկաւոր եւ, վերջապէս, զանազան անօթներ են հարկաւոր: Նրա ծառան այդ բոլորը իր հետ ունի: Նրա նստած ջորիի մի կողքից երկաթեայ շղթայից քարշ է ընկած մի թաղարաձեւ մանղալ, որի մէջ, որմզդական հուրի նման, պահւում է մշտավառ ածուխը: Ջորիի միւս կողքից, հաստ կաշեայ տիկի մէջ, քարշ է ընկած ջորը: Ջուրը մահմեդականի ամենաանհրաժեշտ պիտոյքն է, որ միշտ պէտք է իր հետ ունենայ: Գուցէ այդ է առիթ տոել, որ այդ տիկերի պատրաստութիւնը զարմանալի կերպով կատարելագործուած է արեւելքում: Նրանք ջուրը ե՛ւ սառն են պահում, ե՛ւ ամենասաստիկ տօթերի ժամանակ երբեք չէ հոտում: Կաշին արհեստաւորի շնորհիւ դարձել է մի տեսակ խեցեղէն ման, որ ազատ թոյլ է տալիս օդի հաղորդակցութիւնը ջրի հետ: Նոյն ջորիի վրայ, զանազան անօթների մէջ կայ եւ թրջած թամբաքու եւ սուրճի բոլոր պարագայքը: Բաւական է, որ ծառան լսում է իր տիրոջ հրամանը՝ «ղահոէ՛, նարգիլէ՛»: Ծառան իսկոյն պատրաստում է նախ ղահոէն, ապա նարգիլէն, մատուցանում է իր տիրոջը: Հետաքրքիր է նայել այդ տեսարանի վրայ: Ծառան նարգիլէն բռնած ունի իր ձեռքում, իսկ երկար օձի նման գալարոող կաշեայ ծխաքարշի ծայրը գտնւում է տիրոջ բերանում: Ջորիները գնում են, իսկ տէրը մեծ բաւականութեամբ ծխում է, կարծես իր տանը լինի:

Քարաւանի մէջ կային եւ մի խումբ չինգաններ (ցիգաններ) իրանց կապիկներով եւ պար եկող տղաներով ու աղջիկներով: Տղաների, աղջիկների եւ կապիկների վրայ հաւասար կերպով խնամք էին տանում: Այդ թռչկոտող արարածները նստած էին աւանակների վրայ, իսկ նրանց տէրերը գնում էին ոտով: Այդ ուրախ, թափառական խումբը, որ ճանապարհի բոլոր